անտառը մոտ էր և փայտը շատ՝ այնտեղ բարակ լավաշ էին յէփում։ Լավաշը յէփվում էր մեծ քանակությամբ, երկու, երեք, երբեմն և ավելի ամիսների համար։

Հաց յէփելու պարագաները Զանգեզուրում էլ կրկնում էին Հայկական լեռնաշխարհում և հարևան Թոնդրասպաս գավառներում գործածվածները։ Հացը հունցում ըն խմորի մեջ խառնելով խաշը, տրխտրմօրավ պատրաստված, ուրիշ վայրերում՝ Թրթխմօր։ Տրխտը բառը բացատրում են որպես՝ շոր տախտակի պէս, իսկ մօր՝ որպես կրճատված խմոր բառը։ Բայց իրականում բբու խմոր բառերի աղավաղումն է։

Տրխտրմօրը պահվում է պոնլիկի մեջ աղ արած։ Խմորը ծածկում էին բրդե մէզարավ մինչև որ խմորը կամ՝ գալիս է, հասունանում է։ Այնուհետև պոնլրմ ըն՝ գնդում են տրշտար ծրհանավ, տրշտաֆէրիավ՝ խմորից կտրելով մի կլոր պոնլի համար։ Պոնլէրը՝ գնդերը շարում են մէզարի վրա տափին՝ գետնին և ծածկում նույնպես մէզարավ։ Ապա պոնլէրը յէտ ըն ընում՝ բաց են անում և հարթեցնում հացի տախտակի վրա, մեկնում թխողին, սա էլ թափ տալով օդի մեջ, փռում էր տաֆի վրա[6], որը ճրվարանավ գործած, մեջը խոտ լցրած և մի կտորով վրայից ծածկած երկար ձվաձև խոնչա է, թրխրմ ա բօրանի պատին։ Թրխողին պոնլէր բացանողն ասում է՝

«Նէստա տո՞ւ»[7]։

Կրակը բօրանի մեջ կարգի են բերում բօնրխառնիավ, որ մի երկար փայտ է։ Հացը հանում են էբը կէռ շամփռավ, պատից պոկ գալուն օգնում են ծրհանավ՝ հացհանով—կարճ և տափակ երկաթե փոքր թիակով և փռում են կարպետի վրա գետնին կամ կախում են մի թառի վրա, որ սառչի։ Շատ անգամ շամփուրի մյուս ծայրին լինում է փոքրիկ ծրհան, որը մանավանդ պետք է գալիս քաբան՝ գաթան բօրանի պատից պոկելու ժամանակ։ Բօֆանից բօրանի պատին կպած մասը՝ էլրինջ ա, իսկ բօրանի հատակին վայր ընկած հացը՝ կրտան ա։

Պատրաստի հացը պահում են կամ հատուկ սնդուկի մեջ կամ բարձր կախած տախտակի վրա մէզարավ ծածկված կամ տաշտի մեջ՝ շորս կողմը վօսու փշոտ թուփի ճյուղերով պատած՝ մկներից ապահովելու համար։

Բացի սովորական հացից, թխում են պաղարճ՝ բաղարճ։ Ջաղացի փոքր բօրանի մեջ՝ հնում թխում էին ճրղրցպաղարճը, առանց խաշի և առանց աղի, ընալի՝ անալի, որը բաժանվում էր բոլոր ներկա եղողների միջև ջաղացում, իսկ տանը թխում էին աղով և խաշավ, երբեմն ձվով կամ մածունով պատրաստած։ Երեխայի հիվանդության առիթով՝ ծաղիկ, կարմրուկ հանելուց հետո, համաձայն խոստումին պաղարճավ մատաղ էին բաժանում։ Սրանք մոտավորապես մեկ-մեկ գրվանքանոց պաղարճնէր էին աղով, բայց առանց խաշի պատրաստված, անպատճառ պոնլուր՝ կլոր և տափակ բաժանում էին բարեկամներին, հարևաններին և մանավանդ չքավոր ընտանիքներին։

Նույնպիսի ծիսակատարական նվիրական ծագում և բնույթ ունի քաբան, որը թխվում էր հարսանիքների, թաղումների, ուխտագնացության ժամանակ և հյուր գնալիս մեծարող նվիրաբերության և նման առիթներով, որոնց հետ այսպես թե այնպես շաղկապված էին ծիսակատարություններ կամ մեծարում-

---

[6] Այլ գավառներում՝ բաբատ կամ ռաբաբա։

[7] Նէստա տո՞ւ՝ կպցրո՞ւ։